



«Հայոց ցեղասպանության թանգարանի կենտրոնում են՝
«Հայոց ցեղասպանության թանգարանի կենտրոնում»
հիմնադրամի տնօրեն Էդիտա Գզոյան

ԿԱՐԾԻՔ

Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Վերա Գուրգենի Սահակյանի «Թեշքիլաթը մախսուսա կազմակերպությունը Օսմանյան կայսրությունում» ատենախոսության մասին:

Վերա Գուրգենի Սահակյանի «Թեշքիլաթը մախսուսա կազմակերպությունը Օսմանյան կայսրությունում» ատենախոսությունը նվիրված է Հայոց ցեղասպանության իրականացման մեջ կարևորագույն դերակատարություն ունեցած կազմակերպություններից մեկին, որի միջոցով իրականացվեց խաղաղ բնակչության կոտորածը: Ատենախոսության թեման ավելի լայն է և անդրադառնում է այս կազմակերպության կամ ցանցի ծագման, դրա հանգամանքների, գործունեության տարբեր փուլերի, պատասխանատուների, Միություն և առաջադիմություն կուսակցության հետ հորիզոնական և ուղղահայաց կապերի, ղեկավարության, մարտավարության, գաղափարախոսության և մեթոդաբանության հարցերին:

Լինելով առանցքային դերակատար երիտթուրքերի կառավարման ընթացքում՝ Թեշքիլաթը մախսուսան երկար ժամանակ չի դարձել պատշաճ ուսումնասիրության առարկա: Պատահական չէ, որ թեմայի վերաբերյալ մինչև այսօր առավել արդիական է մնում ամերիկացի պատմաբան Ֆիլիպ Սթոդարդի 1963 թ. պաշտպանած ատենախոսությունը և հետագայում դրա հիման վրա հրատարակած թուրքերեն գիրքը: Թեև վերջին տարիներին մի շարք թուրք հեղինակներ անդրադարձել են այս կազմակերպության գործունեության տարբեր ասպեկտներին, սակայն հայ ուսումնասիրողների շրջանում սա թեմայի

լուսաբանման առաջին փորձն է: Պատճառներից մեկը կազմակերպության գաղտնի բնույթն է, որը թույլ չի տալիս ունենալ նրա հետ կապված վստահելի և հիմնավոր փաստաթղթերի քիչ թե շատ կայուն հենք, իսկ եղած տեղեկությունն էլ մշտապես իրարամերժ է, որոշ դեպքերում՝ նույնիսկ իրար հակասող:

Այս հանգամանքը գնահատելի է դարձնում Վերա Սահակյանի համարձակությունը խորասուզվելու թեմայի հետ կապված բոլոր դժվարությունների մեջ, որն արժանի է ամենաբարձր խրախուսանքի:

Աշխատանքի դրական կողմերից է նաև այն, որ ատենախոսն օգտագործել է բովանդակ ու բազմակողմանի գրականություն՝ այդ թվում և թուրքական աղբյուրներ, դրանք համադրելով հայկական աղբյուրների հետ:

Ատենախոսությունն արդիական է այն պատճառով, որ նվիրված է Հայոց ցեղասպանության իրազործման հարցում Թեշքիլաթը մախսուսա անունով գաղտնի կազմակերպության գործունեության և կառուցվածքի ներկայացմանը, ինչը թույլ է տալիս պատկերացում կազմել նաև Հայոց ցեղասպանության իրազործման մեջ այդ կազմակերպության դերակատարության մասին: Ուստի հետազոտությունը կարող է օգտակար լինել ժխտողականության դեմ պայքարի, անվտանգության քաղաքականության, ռազմավարության մշակման և անվտանգային սպառնալիքներին դիմակայելու առումով:

Հարկ է նշել, որ հեղինակը մեծ աշխատանք է կատարել և նրան հիմնականում հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրները: Ատենախոսության բոլոր գլուխներում տեղ գտած նյութն ատենախոսը հողվածների տեսքով հրատարակել է գիտական պարբերականներում:

Վերա Սահակյանի ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտական աշխատանքի բովանդակությանը և նրա հիմնադրույթների համարժեք արտացոլումն է:

Միննույն ժամանակ, ատենախոսությունը գերծ չէ նաև թերություններից և բացթողումներից, որոնցից մի քանիսի վրա կցանկանայինք հրավիրել ատենախոսի ուշադրությունը:

1. Ընդհանուր բնույթի թերություններ

1.1. Հետազոտության առաջին գլուխը (Օսմանյան կայսրությունը 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին) չի առնչվում հետազոտության թեմային:

Անհասկանալի է, ինչպես XIX-XX դդ. սահմանագլխին տեղի ունեցող քաղաքական զարգացումները և կուսակցությունների ձևավորումը Օսմանյան կայսրությունում, Օսմանյան բանակի արդիականացման խնդիրները և մասնակցությունն Առաջին աշխարհամարտին, պանթյուրքիզմի գաղափարախոսությունը՝ որպես թուրքական ազգային պետության հիմքի լուսաբանում կարող է օգնել թեշքիլաթը մախսուսա կազմակերպության գործունեության բացահայտմանը:

Նույնիսկ դրա ներկայացման պարագայում կա խնդիր՝ Առաջին գլխի երկրորդ ենթավերնագիրը՝ «Օսմանյան բանակի արդիականացման խնդիրները և մասնակցությունը Առաջին աշխարհամարտին» չի համապատասխանում բովանդակությանը: Այն հիմնականում գերմանացի գորավար Գոլցի կյանքի ու կենսագրության շարադրանքն է:

Այս գլուխը կարող էր ներակայացվել ընդամենը մեկ ենթագլխով՝ դիտարկելով թեշքիլաթը մախսուսայի ստեղծման նախադրյալները: Այս տեսանկյունից հատկանշական է նաև, որ հեղինակը նախաբանում նշում է, թե ժամանակագրական առումով ներկայացրել է 1912 թ. մինչև 1918 թթ., քանի որ վավերագրորեն հենց այս ժամանակահատվածում է գործունեություն ծավալել ԹՄ անունով կազմակերպությունը, սակայն առաջինը գլուխը դուրս է այդ սահմաններից:

1.2. Ատենախոսը չափազանց կենտրոնանում է մարդկային գործոնի վրա: Հասկանալի է, որ որոշ առանցքային դերակատարներ վճռական դեր են ունեցել ԹՄ ստեղծման, վերահսկողության և գործունեություն մեջ, սակայն նման առատությամբ անունների շրջանառումը, այն էլ այն դեպքում, որ տարբեր հեղինակներ այդ անձանց տալիս են տարբեր դերեր, գործառույթ և նշանակություն, ուղղակի խճճում է նյութը և թույլ չի տալիս անձնական և մասնավոր գործողությունների հետևում տեսնել մեծ պատկերը: Ավելին, շատ տեղերում հեղինակը առավելապես կենտրոնանում է որոշ փաստերի ու անձանց վրա, որոնք բովանդակային առումով երկրորդական նշանակություն ունեն:

1.3. Ատենախոսության երրորդ գլխի երրորդ ենթագլուխը՝ «Թեշքիլաթ-ը մախսուսա կազմակերպության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը», սկսվում է Արամ Անտոնյանի փաստաթղթերի թուրքերի կողմից ժխտման (շիֆրի, ստորագրության անհամապատասխանություն և այլն) հակադարձմամբ, ինչն արդեն իսկ կատարվել է Թաներ Աքչամի կողմից «Killing Orders. Talat Pasha's Telegrams and the Armenian Genocide» աշխատության նախաբանում: Սույն աշխատանքը հետազոտողը երեք տեղ հղել է ատենախոսության շարադրանքում՝ երկու անգամ ներածության, մեկ անգամ՝ օգտագործված աղբյուրների և գրականության ցանկում: Այս հատվածում հետազոտողը, ընդհանուր առմամբ, զբաղված է Հայոց ցեղասպանության փաստը «ապացուցելու», քան թե թեշքիլաթի անմիջական մասնակցությունը ներկայացնելուն (որոշ շրջաններում տեղահանությունը կազմակերպելը, համակենտրոնացման ճամբարներում հայ տեղահանվածների ոչնչացումը և այլն), ինչը կարծում ենք միանգամայն ավելորդ է:

1.4. Պանթուրքիզմի վերաբերյալ հատվածները հղված են ըստ Ռընե Պինտնի և Շ. Նաթալու աշխատանքների: Կարծում ենք, որ ատենախոսությունը կշահեր մասնագիտական գրականություն օգտագործելու պարագայում, ինչպես օրինակ՝ Landau J. M., Pan-Turkism: from Irredentism to Cooperation, Bloomington and Indianapolis, Indiana University Press, 1995, 275 pp. և Hostler C. W., Turkism and the Soviets: The Turks of the World and Their Political Objectives, London, "George Allen&Unwin", 1957, 244 pp.:

1.5. Թույլ պատկերացում է կազմվում կազմակերպության կառուցվածքի վերաբերյալ: Ընդ որում ատենախոսն անընդհատ փոխնիփոխ օգտագործելով մասնաճյուղ, ճյուղ, ստորաբաժանում բառերն ավելի է բարդացնում կազմակերպության կառուցակարգի ընկալումը: Կարծում ենք, որ կարելի էր 1914 թ. չորս հիմնական ստորաբաժանումները հիմք ընդունելով (Բալկաններ, Կովկաս, աֆրիկյան, արևելյան) կազմել սխեմա՝ նշելով դրանց ենթաճյուղերը, կենտրոնները, ղեկավարներին և հիմնական անդամներին, գինվորական ուժի թվաքանակը (եթե հնարավոր է), ինչը հսկայական գիտական և գործնական նշանակություն կունենար հետազոտող շրջանակների համար:

1.6. Որոշ հիմնական հարցեր, որոնք բարձրացվում են ատենախոսության մեջ, մնում են անպատասխան: Պարզ չէ, թե հեղինակն ի վերջո ո՞ր թիվն է համարում Թեշքիլաթը մախսուսա կազմակերպության հիմնման տարեթիվ, ի՞նչ կապ կար թեշքիլաթի և նրան նախորդող ֆիդայիների միության, և նրան հաջորդած «քարաքուլ»-ի հետ, ԹՄ-ն հետախուզական գործառույթ իրականացնում էր, թե՛ ոչ:

2. Մասնավոր խնդիրներ

2.1. Էջ 29-ում երիտթուրքական կոմիտեի կարգախոսը նշվում է որպես «ազատություն, եղբայրություն, արդարություն», սակայն իրականում կարգախոսը «ազատություն, հավասարություն, եղբայրություն, արդարություն» էր (թուրք.՝ Hürriyet, Müsavat, Uhuvvet, Adalet):

2.2. Էջ 33-ում «Միություն և առաջադիմություն» կոմիտեի կենտրոնական կոմիտեի 1913 թ. կազմում են նշվում Էնվերը և Ջեմալը: Այն դեպքում, երբ Իսմայիլ Էնվերը եղել է կենտրոնական կոմիտեի 1908 և 1917 թթ., Ահմեդ Ջեմալը՝ միայն 1917 թ. կազմի մեջ: 1912-1916 թթ. ԿԿ կազմում փոփոխություններ տեղի չեն ունեցել: Կենտկոմի կազմն ըստ տարիների մանրամասն տես՝ Tarık Zafer Tunaya, Türkiye'de siyasal partiler, gilt 3, İttihat ve Terakki : bir çağın, bir kuşağın, bir partinin tarihi, İstanbul: İletişim, 2011, s. 298-300.

2.3. Էջ 80-ում հեղինակը նշում է հայկական 7 նահանգներ, իսկ էջ 168-ում՝ 7 հայկական գավառներ՝ 6 նահանգների փոխարեն:

2.4. Էջ 39-ում հեղինակը գրում է. «Օսմանյան կայսրությունը պատերազմելու էր Առանցքի ուժերի ճամբարում»: Նկատենք, որ Առանցքի ուժերը Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Գերմանիայի, Ճապոնիայի ու Իտալիայի դաշինքն էր:

2.5. Էջ 48-ում նշվում է, որ «Ժամանակի ընթացքում “Türk Yurdu”-ն իր տեղը զիջեց “Türk Ocakları” կազմակերպությանը»: Կարծում ենք պետք է փոխել “Türk Yurdu Cemiyeti”-ն, որպեսզի շփոթմունք չառաջանա կազմակերպության և նույնանուն պարբերաթերթի միջև, որը երկու կազմակերպությունների պաշտոնաթերթն էր:



2.6. Վերաշարադրման և ճշգրտման կարիք ունի էջ 66-ը կապված պարամիլիտար, երիտասարդական և սկաուտական կազմակերպությունների անվանումների, ստեղծման տարեթվերի և (հնարավոր) հիերարխիայի մասով: Նշենք միայն, որ «Türk gücü cemiyeti»-ն (տեքստում՝ Osmanlı Güç Cemiyeti) ստեղծվել է 1913 թ., 1914 թ. այն Նախարարների խորհրդի հրամանգրով վերակազմավորվել է միայն:

2.7. Էջ 70-ում հեղինակը գրում է «Թեջքիլաթի կազմավորման վերաբերյալ օգոստոսի 2-ի թուրք-գերմանական պայմանագրում որևէ կետ չկա: Սա ցույց է տալիս, որ կայգերական Գերմանիան տեղյակ էր այդ կազմակերպությունից»: Ինչպե՞ս կարող է պայմանագրում կետի բացակայությունը վկայել Գերմանիայի տեղեկացվածության մասին:

2.8. Էջ 79-ում նշվում է. «Այս նպատակին ընդառաջ՝ 1914 թ. օգոստոսից մինչև հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում ռուս-թուրքական սահմանի երկայնքով ձևավորվում է ԹՄ երեք շտաբ՝ Էրզրումի, Վանի և Տրապիզոնի: Այս հանգամանքը նկատի առնելով՝ հետազոտողներն այն կարծիքն են առաջ քաշում, որ ԹՄ-ն իր գործունեությունն սկսել է Կովկասից, և միայն հետագայում՝ ընդլայնվել»: Անհասկանալի է, թե ԹՄ Էրզրումի, Վանի և Տրապիզոնի շտաբների գործունեությունը ինչպե՞ս է սկսվել Կովկասից, եթե նրանք աշխարհագրորեն Կովկասում չէին:

Բացի այդ հետագա էջերի շարադրանքը ցույց է տալիս, որ կազմակերպությունը կարող էր ձևավորված լինել կամ Տրիպոլիտանական պատերազմի կամ Բալկանյան պատերազմների ժամանակ բոլորովին այլ վայրերում: Էջ 79-80-ում նշվում է. «1915 թ. անվանափոխվել է՝ ստանալով «Ումուր-ը շարքիյե դաիրես»-ի, ուրեմն, այո՛, կարող ենք ասել, որ այն իր գործունեությունն սկսել է Կովկասից: Իսկ, եթե խոսքը թուրք-իտալական և Բալկանյան պատերազմների ընթացքում ձևավորված կառույցի մասին է, այդ դեպքում նման ձևակերպումը ճիշտ չէ»: Անհասկանալի է, որն է հեղինակի սեփական կարծիքը տվյալ հարցի շուրջ, քանի որ այս տարբեր վարկածները հայտնի էին նույնիսկ այս աշխատանքը գրելուց առաջ և ատենախոսության արժեքը պետք է լինի հենց հետազոտողի սեփական ներդրումը այս հարցի պարզաբանման մեջ:

2.9. Հեղինակը բանտերից դուրս բերված հանցագործների մասով ներկայացնում է մի շարք հեղինակների կողմից բերված տվյալներ (Գրիկեր, դատավարության տեղեկագրեր, Ջ. Փարլար, Թունայա), բայց անհասականալի է, թե ինչի վրա հիմնվելով է վերջում արժանահավատ համարում Գրիկերի կողմից բերված տվյալները՝ նշելով, որ միայն բանտերից արձակվածների թիվը կազմում է մոտավորապես 10 000 մարդասպան: Միննույն ժամանակ, հեղինակը էջ 115-ում նշում է, թե Ջ. Լեվրնթը Բալկանյան պատերազմին մասնակցածներին անդրադառնալիս գրում է. «Հալիլ (Քուտ) բեյը Ստամբուլի բանտերից ընտրել էր մոտ 4000 հանցագործի, որոնք գողեր էին, հարբեցողներ, խաղամուլներ, խաբեբաներ, մարդասպաններ»:

2.10. Էջ 138-ում Ժխտողականների տեսակետները հավասար հարթության վրա են դրվում ԹՄ-ի վերաբերյալ փաստերի հիման վրա հետազոտություններ կատարողների աշխատանքները նկարագրելիս. «Հայոց ցեղասպանությանը ԹՄ մասնակցության հարցի առնչությամբ հետազոտողները բաժանվում են երկու մասի: Մի մասը պնդում է, որ հիմնական կատարողները եղել են ԹՄ գնդերը, մյուս մասը կարծում է, որ նրանք ընդհանրապես մասնակցություն չեն ունեցել: Անշուշտ, վերջին տեսակետը պաշտպանողները պնդում են, թե ցեղասպանություն, որպես այդպիսին, չի էլ եղել, իսկ եթե չի եղել, ուրեմն ինչին կարող էր որևէ կազմակերպություն մասնակցել»: Սա, կարծում ենք, սխալ է: Անաչառ պատմաբանների ուսումնասիրությունները և կողմնակալ, քաղաքական նպատակներով գրված աշխատանքները չեն կարող դիտարկվել միննույն հարթության վրա:

2.11. Էջ 143-144-ում կատարվել է սխալ թարգմանություն: Ռայմոնդ Գևորգյանը չճշգրտված է համարում ոչ թե ողջ Հայոց ցեղասպանությունը, այլ միայն լոկալ՝ 1914 թ. դեկտեմբերին Էրզրումում թեշքիլաթի կողմից հայերի դեմ իրականացված սպանության, թալանի և առևանգման գործողությունները (տե՛ս Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History, London, New York, "I.B. Tauris", 2011, p. 220).

2.12. Տեքստում մի քանի տեղ օգտագործվում է 1915-1916 թթ. Հայոց ցեղասպանություն արտահայտությունը (էջ 14, 15, 79, 97), թեև հայ պատմագրությունը վերջին տասնամյակներում ընդունելի է համարում 1915-23 թթ.:

3. Տեխնիկական խնդիրներ

3.1. Ատենախոսության շարադրանքն ընդհանուր առմամբ խրթին է, շատ տեղերում ապահովված չէ տրամաբանական կապը:

3.2. Աշխատանքում տեղ են գտել բազմաթիվ տառասխալներ և վրիպակներ:

3.3. Շատ տեղերում անհասկանալի պատճառներով ներկայացված են անգլերենով և թուրքերենով հատվածներ, որոնց հայերեն համարժեքները ներկայացված չեն:

3.4. Տեքստում որոշ հեղինակների հղելիս կամ վկայակոչելով, ատենախոսը չի բացատրում նրանց ով լինելը (ականատես, պատմաբան, թե քաղաքական գործիչ):

3.5. Անվանումները տեքստի տարբեր հատվածներում կարող են տարբեր ձևերով գրվել: Օրինակ, Թեշքիլաթը, Թեշքիլաթ-ը, տեքստում հանդիպում են նաև դրանց ինչպես չակերտից ներս, այնպես էլ՝ չակերտից դուրս տարբերակներ:

Տառատեսակը GHEA Grapalat փոփոխության պատճառով թուրքերեն «ը»-ն տեքստի մեջ փոխվել է i-ի, ինչպես օրինակ Teşkilat-i Mahsusa, Bab-i Âli, և այլն, բացառությամբ օգտագործված գրականության ցանկի, որը մնացել է Sylfaen տառատեսակով:

Անձնանունների ուղղագրական շեղումները (օր.՝ Իսմայիլ Ջանփոլադ և Մաքս Էրվին ֆոն Շյոբներ-Ռիխտերի պարագայում) երբեմն անճանաչելի են դարձնում պատմական կերպարին, ինչպես օրինակ՝ Կոստանտին Պոլկոզնիչ Բորզկի (էջ 42), Միրզա Ֆեսի Ալի Ախունդու (էջ 44), Սթենջ բեյ (խոսքը գերմանացի զինվորական Շտանզեի մասին է) (էջ 91, 94, 109, 110-111):

Նոր օսմանները տեքստում հանդիպում են տարատեսակ անուններով, ինչպես օրինակ՝ «Նոր օսմանցիներ», Երիտասարդ օսմանցիներ, «Երիտասարդ օսմանցիներ/թուրքեր»:

Ցեղերի և փախստականների բնակեցման գլխավոր վարչությունը («İskân-ı Aşairin ve Muhacirin Müdiriyeti») էջ 74-ում նշվում է որպես «Աշիրեթների և գաղթականների զետեղման տնօրինություն», էջ 75-ում «Գաղթականների վերաբնակեցման տնօրենություն», էջ 168-ում՝ «Տեղահանության և գաղթականության հանձնաժողով»:

Ամփոփելով նշենք, որ Վերա Սահակյանի պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի պահանջներին, իսկ ատենախոսությունը պատրաստ է հրապարակային պաշտպանության:

Կարծիքը հաստատվել է «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Վահագն Դադարյանի անվան համեմատական ցեղասպանագիտության բաժնի (29 հունիսի, 2024 թ.) նիստում:

Քննարկմանը մասնակցել են բաժնի վարիչ պ. գ. թ. Սուրեն Մանուկյանը, բաժնի աշխատակիցներ պ. գ. թ. Լարեկ Պողոսյանը, Ռեզինա Գալուստյանը, Ինեսա Ստեփանյանը և Սաթենիկ Մաթոսյանը:

Վահագն Դադարյանի անվան համեմատական ցեղասպանագիտության բաժնի վարիչ,

պ. գ. թ. Ս. Մանուկյան՝



Ստորագրությունը հաստատում եմ՝

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գործադիր տնօրենի պարտուղար, պ. գ. թ.

Լարինե Մարգարյան

02.07.2024 թ.

